

մը ելեր մեկներ է ժամանակին կայան-
քէն (station), պէտք է որ վերջապէս
հասնի անվրէպ և անվտանգ 'ի կայանս
յաւիտենականութեան :

ՀՆԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՒՏՔ

Անցեալ տարւոյն վերջերը Պեճիոյ
մէջ հնաբանական (Paléontologique)
և երկրաբանական այնպիսի գիտեր ե-
ղան, որ քիչ ատենէն Եւրոպիոյ բոլոր
գիտնոց մտադրութիւնը պիտի գրա-
ւեն: Տինան (Dinant) քաղաքին շրջա-
կայքը, Նամիւր գաւառին մէջ, շատ մը
անձաներ ու այրեր կան, որոնց շատե-
րը դեռ գիտութիւնը չէ քննած: Տինա-
նէն երկու փարսախ հեռու այս անձա-
ներէն մէկուն մէջ Ղուվէնի համալսա-
րանէն երկու դասատուք փորեցին, և
շուտ մը հողոյն առաջին խաւին մէջ
գտան շատ մը դրամներ Գաղղիոյ հա-
սարակապետութեան, քիչ մը խորը՝
Պաւերայի դրամներ, ալ աւելի խորը՝
միջին դարու դրամներ. ետքն սկսան
փորել կելտաց անօթներ, նետ մը ա-
րուէ սլաքով. և ուրիշ առարկաներ որ
կելտաց շրջանը կը յիշեն: Այս վերջին-
ներս սևորակ հողու մը մէջ թաղուած
էին, անկէ վար գտնուեցաւ կաւային
հողը, և ամենէն վերջն ալ այն մասնա-
ւոր խաւը որ երկրաբանը ջրհեղեղ (di-
luvium) կը կոչեն: Շարունակելով փո-
րելը, վերջապէս գտան շատ մը նախ-
ջրհեղեղեան առարկաներ, այծու ուղբի
ոսկր մը սրնգի ձև տրուած, որուն վրայ
գայլախազի տաշուածքը կը տեսնուին,
գայլախազէ բաղմամբիւ դանակներ,
մանր վէզեր ամենևին նման անոնց ո-
րոնցմով հիմա ալ տղայք կը խաղան,
ոսկրէ ասեղ մը, ածուխ, մարդու այ-
րած ոսկերք, կաղին և ուրիշ պտուղ-
ներ, և ծառի ճիւղեր. վերջապէս մար-
դու ամբողջ ոսկրոտիք մը, հազարէն
աւելի կտորէ բաղկացած. ամենն ալ

հորիզոնական դրքով, ինչպէս որ ջրոց
ողողմունքը զանոնք տեղաւորած պիտի
ըլլար, և 'ի լրումն ամենայնի՝ մարդու
երկու գանկ գտան՝ կատարելապէս
պահուած, աւազով ու քարի մանրու-
քով լեցուն, զորոնք ջուրն անոնց մէջ
մտուցեր է: Այս գանկերուն համա-
ձեւութիւնը բոլորովին նոյն է իրենց նը-
կարագիրներովը մեր ժամանակի մարդ-
կանց գանկին համաձեւութեանը: Թէ-
պէտև ասոնց վրայ հազարաւոր տարի-
ներ անցած ըլլան, 'ի վերայ այսր ամե-
նայնի զարմանալի կերպով կը հաստա-
տեն մարդկային տեսակին միութիւնը,
և 'ի հիմանց կը քանդեն արդի նիւթա-
կանաց այն ենթադրութիւններն, որ
մարդու տեսակը մէկէն աւելի կը հա-
մարին: Երկաթն անծանօթ էր այն
մարդկեղէն էակաց, և գայլախազ կը
գործածէին, կրակ կը վառէին. վերջա-
պէս այս անձաներուն մէջ գտնուած
առարկաներէն կարելի է ճանչնալ մե-
ծագոյն մասամբ անոնց սովորութիւն-
ները և ունակութիւնները: Վան Պէնէ-
տէն դասատուն՝ որ առաջին անգամ
մտածեց այս պեղմունքն ընել, յետ
քննելու այն անձաներէն երկուքն ու
վերոյիշեալ գիտերը ձեռք բերելու, ա-
միս մը կամ քիչ մը աւելի այս պեղ-
մունքն ընդհատեց, և զրեց Եւրոպայի
առաջին երկրաբաններուն և հնաբան-
ներուն, աղաչելով զանոնք որ անձամբ
զան ներկայ գտնուելու այն պեղմանց,
և Գաղղիա, Անգղիա ու Գերմանիա զը-
կուած նամակները կ'իմացունեն որպեղ-
մունքը նորէն պիտի սկսէին անցեալ
տարւոյն վերջի օրերը. մենք ալ կը յու-
սանք ժամանակին հաղորդելու մեր ըն-
թերցողաց այս պեղմանց արգասիքը: